

— Բու ջորին քեզ համար պիտի պատրաստեն, Հայր Սուրբ:

— Բայց հիմա աս ցուրտին, աս սառնին, գիշերով ես քայլ մը չեմ փոխեր: Դուք խելքերնիդ թռուցեր էք:

— Կարելի է որ քու կամքիդ քեզ թողուն տեղեդ չես շարժիր, բայց որովհետեւ քահանայ աստուծոյ ես, արդարութիւնը կը սիրես եւ պարտք է սիրէի պէտք է մեզի հետ գաս, եւ եթէ չուզես սիրել մենք քեզի սիրեցնել կ'ուտանք:

— Բռնութեամբ զիս պիտի տանիք,— ըսաւ խոժոռելով եւ շփոթելով վանահայրը:

— Միթէ՞: Իշխանն էլ պիտի գայ. միթէ՞ բռնութիւն կը գործածենք մարդու, որ մեր բարեկամական խորհրդոց կը հետեւի:

Աս միջոցին տղաքն եկան եւ իմացուցին թէ ամէն բան պատրաստ է:

— Երթանք, իշխան,— ըսաւ Տարոնեցին:

— Ես իմ կամօքս քայլ մը չեմ առնուր,— պատասխանեց Մուշեղ:

— Դու լաւ մարդ ես. ոչ մէկ՝ այլ շատ քայլեր էլ կ'առնուս: Միայն պէտք է, որ քեզի օգնեմ, վասնզի իշխան մարդ ես եւ պէտք է թելերդ մտնել:

Եւ այս ըսելով Տարոնեցին (որ Յովնան ինքն էր ինչպէս ընթերցողը կրցաւ երեւակայել) թելէն բռնեց, եւ իբրեւ թէ մեքենայէ մը ցնցուելով Մուշեղ ցատկեց երկու ոտից վրայ:

— Ա՛յ անօրէն գռեհիկ, թեւս կոտրեցիր, թո՛ղ,— կ'աղաղակեր եւ կը ցնցուէր:

Իսկ նա երեսին վրայ առանց փոքրիկ շարժմունք յայտնելու, եւ ամենայն հանդարտութեամբ,